ՀԱՂԲԱՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԻ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

(ԳԵՏԱՇԷՆԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ)

Հաղբատը մէկն է Հայոց ամենանշանաւոր վանքերից եւ հոգեւոր կեդրոններից. ծագմամբ ունինք շատ աւելի հնագոյն վանքեր, բայց քչերը դրանցից կատարել են այնպիսի երկարատեւ և կարեւոր դեր, ինչպէս Հաղբատն է: Նա նշանաւոր է նախ իբրեւ ճարտարապետական արուեստի մի թանգարան իւր բազմազան շէնքերով, արձանագրութիւններով, ֆրեսքներով եւ զարդերի քանդակներով. նշանաւոր է իբրեւ հոգեւոր կեդրոն իւր արքեպիսկոպոսութեամբ, որ ԺԲ. դարից կարեւոր դեր է կատարել մեր եկեղեցական պատմութեան մէջ, յատկապէս մինչեւ ԺԴ. դարի վերջերը: Բայց ոչ պակաս նշանաւոր է նաեւ իբրեւ մատենագրութեան եւ գրչութեան արուեստի գլխաւոր կեդրոն արեւելեան Հայաստանի մէջ: Մտադիր չլինելով այստեղ տալ նորա կատարած դերի լրիւ պատկերը, առաջարկում ենք միայն այդ դպրոցի մի գլուխ գործոցի՝ «Գետաշէնի աւետարանի» ուսումնասիրութիւնը (*):

Ա.

Աւետարանը մեծադիր է, կազմը 30×23 սմ. մեծութեամբ, կաշեպատ տախտակով, առաջին երեսի զարդարանքը արծաթի բեւեռներով քառանկիւնու մէջ՝ նման բեւեռներից կազմուած մի խաչ մէջտեղում. թեւերի ծայրերը երեք երեք բեւեռներով: Միւս երեսի զարդարանքն ընկած է:

Նիւթը՝ հաստ մագաղաթ հորթի կաշուց՝ 30×22 սմ. մեծութեամբ:

Գիրը՝ բոլորաձեւ, միջին երկաթագիր, երկսիւն, 21×6 1/2 սմ., ներքեւի տնահամարներն էլ հետը. տնահամարները փոքր երկաթագրով, ինչպէս և զրչի ձեռքով կատարուած սրբագրութիւններն ու լրացումները: Տողերը մի գծով, որոնց վերայ դէպի վեր շարուած են տառերը. տնահամարների գծերը աւելի նեղ: Գրերն ընդհանուր առմամբ բոլորաձեւ լինելով՝ մի քանի տառերի գծից ցած վերջաւորութիւնները քիչ սրածայր են՝ փ. ք. հ. բառերի մէջ, իսկ միւսներից՝ բ. գ. ի. խ. կ. պ. տների սկզբում իբրեւ գլխատառեր: Մանրանկարչական տառերով են սկսւում մեծ հատուածները, հաղուագիւտ դէպքում գլխատառին կցուած է մի արմատնիկի զարդ, դէպի լուսանցքն ուղղուած, որ, հաւանօրէն, նկարիչն է աւելացրել և ոչ գրութեան հետ նկարուած: Ոսկի քիչ է գործադրուած բնագրի մէջ. հատուածների առաջին տողը, երբեմն, կամ առաջին մեծ տառը ոսկով, գործադրուածն էլ փոշոսկի է, այժմ արդէն փայլը կորցրած: Ոսկու փոխարէն մեծ հատուածի առաջին տողում գործադրուած է պարզ կարմիրը, բայց երբեմն և ոսկու փոշով ծածկուած:

Գրիչն է Յակովը, իսկ սրբագրողը կամ ուղղողը Մխիթար Քոյրայրեցի (Զ-ում Քոյրարեցի, 61 ա.), որ լրացումներ ունի բոլորգրով, բառեր կամ փոքրիկ բաց թողած նախադասութիւններ: Գրչութեան տեղը Հաղբատն է եւ ժամանակը 1211 թ.: Նկարիչն է Մարգարէ և կազմուած է Հոռոմոսի վանքում «հրամանաւ հաւր Մխիթարայ»: Ստացողն է Սահակ կրաւնաւոր և յետին քահանայ՝ «աշակերտ սբ. ուխտիս Հաղբատայ աղգաւ և տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնւոյ»:

Բ.

Ձեռագիրը բազմաթիւ յիշատակարաններ ունի, որ մէջ ենք բերում իբրեւ նիւթ Ձեռագրի ծագման եւ պատմութեան համար, դասաւորելով ժամանակագրական

(*) Բերուած է մեր ձեռքով, այժմ Էջմիածնի մատենադարանում: